

ՀԱՅ-ԱՓԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ Թ. Դ.
80-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ԿՂԱՐՁՔԻ
ԿԻՒՐՈՊԱՂԱՏՈՒԹԻՒՆԸ

Թ. դ. 80-ական թթ. տեղի ունեցած հայ-ափխազական պատերազմները եւ գրանց ընթացքում Կղարջքի կիւրոպաղատութիւնում ձեւաւորուած վարչա-քաղաքական իրավիճակը սերտորէն փոխկապակցուած են: Վերջին իրողութիւնը պատմագիտութեան մէջ անտեսուել է: Աւելին, Թ. դ. 80-ական թթ. հայ-ափխազական պատերազմները պատմաբանների կողմից խորութեամբ երբեք չեն լուսաբանուել, իսկ նոյն շրջանում Կղարջքի կիւրոպաղատութեան վարչա-քաղաքական իրագրութեան քննութեամբ գրեթէ բացառաբար զբաղուել են միայն վրացի ուսումնասիրութերը: Վերջիններիս ջանքերը, սակայն, գլխաւորապէս նպատակաւութեած են եղել արդէն Կղարջքի (Վրաց կոչուած) թագաւորութեան շրջանի պատմութեան եւ պատմա-աշխարհագրական ինդիբների ուսումնասիրութեանը:

Կղարջքի թագրատութիւնների տիրոյթները

«Վրաց տարեկրութեան» պահպանած մի հաղորդման համաձայն՝ Կղարջքում հաստատուած Վասակ Բագրատունու որդի Աստրներսէցը տիրում էր այսպէս կոչուած Ստորին Տայքին, Ասիսիորիին (թերեւս Արևեց փոր), Շաւշէթին, Կղարջքին, Նիդալին, Աղարին (իզք) եւ Սամցխէին¹: Լստ Դաւթի որդի Սրբատի՝ Աստրներսէի որդի Աշոտ Կիւրոպաղատը իշխանութիւն ունէր «Շաւշէթ-Կղարջքի վրաց»²: Ազնուհետեւ, հեղինակը տեղե-

¹ Տե՛ս «Մատիան Կարլիս», перевод, введение и примечания М. Лордкипанидзе, Тбилиси, 1976, էջ 28-29:

² Жизнь и известия о Багратидах, царях наших грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузин-

կացնում է, որ Աշոտի տիրոյթներն էին Շաւշքթը, Կղարջքը եւ Նիգալը³: Վարդան վարդապետը հաղորդում է, որ երբ խալիֆան Վասակի որդի Աշոտին տուեց Վիրքը, նա սկզբում «տիրեաց ի կաղըցաց մինչեւ ի Տփիխս, լեռնակողմամբն հանդերձ»⁴: Արսինքն՝ Աշոտը տիրում էր Գուգարքի Կղարջք գաւառին եւ այնտեղից էլ սկզբում սկսեց Գուգարքի արեւմտեան մասի նուածումը: Աշոտն իր ծրագրերն իրականացնելիս բախում էր Տփիխս ամիրայութեանը, պարտութիւն կրեց ու նահանջեց Կղարջք՝ ամրանալով Արտանուջ բերդում⁵: Արաբների դէմ պայքարում նա ի վերջոյ սպանուեց (826 թ.), իսկ արաբները գրաւեցին նրա տիրոյթները⁶:

Ղեւոնդը վկայում է, որ 774-775 թթ. ապստամբութիւնից յետոյ ստեղծուած անելանելի իրավիճակից մղուած՝ Ամատունիները եւ որոշ այլ նախարարներ՝ 12 հզ. ժողովրդով, հեռացան իրենց տիրոյթներից եւ հասան «ի սահման Վրաց ի գաւառն կող»⁷: Վերջինս ցոյց է տալիս, որ Տայքի հիւսիսային կող գաւառը չէր գտնուում Արաբական խալիֆայութեան Արմինիա ոստիկանութեան Երկրորդ Արմինիա վարչական շրջանի մէջ, որն ընդգրկում էր Վիրքը, Գուգարքը, Մանարքը եւ որոշ այլ շրջաններ, այլ մաս էր կազմում այդ դրան հարաւից սահմանակից Երրորդ Արմինիայի, որի մէջ մտնում էին Ալրարատը եւ Վասպուրականը⁸: Բաղրատունեաց ճիւղի՝ Կղարջքում հաստատուելը տե-

ским, которое написал Сумбат, сын Давида, *տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXVIII, Тифлис, 1900, էջ 141.*

³ *Անգ, էջ 142:*

⁴ «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», *Վենետիկ, 1862, էջ 84:*

⁵ *Տե՛ս Վահութի Բագրatiոնi, История царства Грузинского, перевод Н. Накашидзе, Тбилиси, 1976, էջ 187, Лордкипанидзе М., Возникновение новых феодальных государств, «Очерки истории Грузии», т. II, Тбилиси, 1988, էջ 248, 307-308:*

⁶ *Տե՛ս «Матиане Картлиса», էջ 29:*

⁷ «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», *Ա Պետերբուրգ, 1887, էջ 168-169:*

⁸ *Տե՛ս ԵՊՀ ԶԱՐԵՒՆԱՆ Ա., Արմինիա ոստիկանութիւնը (պատմա-աշխարհագրական ուսումնափրութիւն), պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախօսութեան Սեղմագիր, Երևան, 2006, էջ 9-11:*

դի է ունեցել 775թ.⁹, իսկ Ղեւոնդի նշած դէպքերը տեղի են ունեցել 789թ.¹⁰: Ուստի՝ Վասակի՝ Կղարջքում հաստատուելուց մօտ մէկուկէս տաճամեակ յետոյ՝ 789թ. դրութեամբ, Տագքի հիւսիսային Կող գաւառը՝ ըստ Ղեւոնդի, ինչպէս նաև ամրող մացեալ Տագքը, չէին մտնում Կղարջքի Բագրատունիների տիրոյթների մէջ։ Արարական տիրապետութեան շրջանի պատմիչ Ղեւոնդի ընկալմամբ Վիրք հասկացութիւնը նոյնանում է Երկրորդ Արմինիա երկրամասին, որն ընդգրկում էր նաև Գուգարքը, ինչի պատճառով էլ Կող գաւառից հիւսիս գտնուող Գուգարքը նշուում է որպէս Վիրքի մաս¹¹:

Ինչ վերաբերում է Տագքին, ապա այս 774-775թթ. ապստամբութիւնից յետոյ ժառանգական իրաւունքով անցել էր Բագրատունիներին, քանի որ Հայոց իշխան Աշոտ Մասկերի (790-826) մայրը Մամիկոնեան էր, իսկ ապստամբութիւնից առաջ Տագքը Մամիկոնեանների տիրոյթներից էր¹²: Վարդան վարդապետը Հաղորդում է, որ Աշոտ Մասկերը եւ նրա եղբայր Շապուհը թ. դ. սկզբին «գրաւեցին յինքնան զՇիրակ եւ զԱշոցք, եւ զգաւան Տայոց»¹³:

Համադրելով վերոյիշեալ տեղեկութիւնները՝ Համոզւում ենք, որ Ապրներսէհի ոչ բոլոր տիրոյթներն են ժառանգական իրաւունքով անցել նրա որդի Աշոտին։ Նա ժառանգել է միայն Շաւշէթը, Կղարջքը եւ Նիգալը։ Այնուհետեւ նա փորձ է կատարել տիրելու արեւմտեան Գուգարքին եւ Տփղիսին, սակայն պարութիւն է կրել ու սպանուել:

⁹ Տե՛ս Ն. Ա.ԴՈՒՅՑ, Պատմական ուսումնասիրութիւններ, Փարիզ, 1948, էջ 93:

Ա. Տեր-Ղեւոնդեանը կարծիք է յայսներ, թէ ապ իրազարձութիւնը տեղի է ունեցել 775-784թթ. (աե՛ս Տեր-Գևոնդյան Ա., Արմենիա և Արաբական Խալիֆատ, Երևան, 1977, էջ 124):

¹⁰ Տե՛ս Լ. ԽԱՅՐԻԿԵՆԸ, Եջիր համշինահայ պատմութիւնից, «Բանրեր Երեւանի համարարանի», 1969, թիւ 2, էջ 117-118.

¹¹ Այս խնդրով աւելի մանրամասն տե՛ս Եղիսաքարեան Ա., Տայքի իշխանութիւնը հայ Բագրատունիների տիրութեան համակարգում, «Պատմարանասիրական հանդէս», 2008, թիւ 3, էջ 197-208:

¹² Տե՛ս Վ.Ա.ՐԴԱՐԱՆ Վ.Ա.ՐԴԱՐԱՆ, էջ 84, «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզիրական», հրատ. Ար Մալխասնանց, Ա. Պետերբուրգ, 1885, էջ 106:

¹³ Վ.Ա.ՐԴԱՐԱՆ Վ.Ա.ՐԴԱՐԱՆ, էջ 83:

«Վրաց տարեգրութիւն»-ը 881թ. վերաբերող մի հաղորդման մէջ տեղեկացնում է, որ Աշոափ որդի Գուառամը մինչ այդ տիրել էր Զաւախքին, Թռեղքին, Տաշիրքին, Աշոցքին եւ Արտահանին, որից յետոյ իր տիրոյթները բաժանել էր եղբայրների՝ Աստրներսեհին եւ Բագարատի հետ, իսկ Աշոցքը՝ զիջել հայոց թագաւորին¹⁴: Վախուշտի Բագրատիոնին, որ օգտուել է իր նախորդ պատմիչների հաղորդումներից, տեղեկացնում է, որ Աշոտի որդիներից Բագարատը տիրել է Քարթլիին եւ Վերին Քարթլիին կամ Սամցիսէին, Աստրներսեհը՝ Կղարջքին, իսկ Գուառամը Զաւախքին, Թռեղքին ու Աշոցքին եւ Հայաստանի որոշ հատուածների¹⁵: Եթէ համեմատենք վրացական երկու աղբիւրների տեղեկութիւնները Գուառամի տիրոյթների առումով, ապա կը տեսնք, որ Արտահանը եւ Տաշիրքը դիտում են որպէս Հայաստանի մաս, որը եւ համապատասխանում է իրականութեանը: Բացի այդ, եթէ քարտչագրենք երեք եղբայրների տիրոյթները, ակնյայտ կը գտանայ, որ Աստրներսեհը տիրում էր բուն Կղարջք գաւառին, Գուառամը՝ Հարաւ-արեւմուտքից Հիւսիս-արեւելք հերթականութեամբ տեղաբաշխուած Արտահանին, Աշոցքին, Տաշիրքին, որոնք իր տիրոյթներին կցեց Արաբական Խալիֆայութեան Արմինիա ոստիկանութեան իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, Զաւախքին եւ Թռեղքին, իսկ Բագարատի տիրոյթը՝ Վերին Քարթլին կամ Սամցիսէին հիւսիսում սահմանակցում էր Ագարին կամ Էգրին, իսկ Հարաւ-արեւմուտքում՝ Շաւաշչթին: Ամենայն հաւանականութեամբ, Բագարատի տիրոյթ «Քարթլի»-ն վերաբերում էր Էգրին եւ Շաւաշչթին եւ ոչ մի կերպ Տայքի հիւսիսային գաւառներին, որոնցից Բագարատի տիրոյթները բաժանուած էին Գուառամի հողերով: Բացի այդ, վրացական աղբիւրներում երեք եղբայրների տիրոյթների մէջ Տայքի որեւէ հատուածի շիշատակուելը խօսում է այն բանի օգտին, որ երեք եղբայրների տիրոյթները տեղաբաշխուած էին Տայքից հիւսիս եւ հիւսիս-արեւելք:

Այսինքն՝ երեք եղբայրները վերատիրել են Սամցիսէին եւ իրենց տիրոյթներին միացրել Զաւախքը, Թռեղքը, Տաշիրքը, Աշոցքը եւ Արտահանը: Այս հողերի մէծ մասին տէր է դարձել Գուառամը: 881թ. դրութեամբ, ինչպէս տեսանք, Արտահանը, Աշոց-

¹⁴ Տե՛ս «Մատիան Կարլիսա», էջ 31:

¹⁵ Տե՛ս Վախուշտի Բագրատոնի, էջ 187:

քը եւ Տաշիրքն արդէն կցուել են Հայաստանի Բագրատունիների տիրոյթներին, իսկ Թռեղքին տիրել էր 876թ. Արդւէթից աեղափոխուած եւ այնտեղ հաստատուած Լիպարիդ Բաղվիվաշը¹⁶: Կղարջք գաւառին տիրում էր Աստրեսեհը, Սամցիկին՝ Բագարարը, իսկ Գուառամի տիրոյթներից համարեա ոչինչ չի մնացել: Եթէ հաշուի առնենք այն փաստը, որ Գուգարը՝ Զաւախով հանդերձ, փերածուել է Հայաստանի Բագրատունիների տիրոյթի¹⁷, ապա պարզ կը դառնայ, որ նա լիովին զրկուել էր իր հողերից:

Հստ Դաւթի որդի Սմբատի՝ այդ նոյն ժամանակ Աշոտի որդի Աստրեսեհի որդի Գուրգէն կիւրոպաղատը Տայքի Կարմախ ամրոցից տեղափոխուեց ու հաստատուեց Շաւշչթում եւ Արտահանում: Տայքում գտնուող Կալմախը կամ՝ ըստ Վարդան Վարդապէտի՝ Կամախը, կառուցել է Աշոտ Մսակերը¹⁸: Ամենայն հաւանականութեամբ, Տայքից նրան դուրս է մղել իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին: Այսինքն՝ Աշոտ կիւրոպաղատի ժառանգներին յաջողուել էր կարճ ժամանակով տիրել Տայքի հիւսիսային որոշ շրջանների:

Մատացում է, որ Կղարջքի Բագրատունիների մէջ ամենահզօրը Գուառամ Բագրատունին էր, որը զրկուեց իր տիրոյթներից, իսկ Կղարջք գաւառի տէրը՝ Աստրեսեհը Բագրատունին, խորամանկօրէն՝ օգտուելով Աշոտ Բագրատունու հովանաւորութիւնից եւ աջակցութիւնից, կարողացաւ ընդարձակել իր տիրոյթների սահմանները:

Այս ամէնի հետեւանքով տրամարանական էր, որ Գուրգէն Բագրատունին եւ Գուառամի որդի Նասրան դաշնակցում էին ափխազաց թագաւորի հետ Արմինիավի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու ոչէմ նրա մղած պայքարում, իսկ Թռեղքին տիրած Լիպարիս Բաղվիվաշը եւ Կղարջքի կիւրոպաղատ Դաւիթը (մաէ. 881 թ.)՝ մարտնչում էին Աշոտի կողքին: Հստ «Վրաց տա-

¹⁶ Տե՛ս «Մատիան Կարլոս», էջ 31: Արդւէթը գտնուում էր Ավերիլա գետի և Արդւէթի կամ Լիիի լեռնաշղթայի միջնեւ (տե՛ս Ս. ԵՐԵՄԵՍՅԱՆ, Մեծ Հայք ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 39):

¹⁷ Տե՛ս «Յովհաննու կարողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», աշխարհաբար թարգմանութիւնը և ծանօթագրութիւնները Գ. Թոոստ Անանիք, Երևան, 1996, էջ 142, 146:

¹⁸ Տե՛ս Վարդան Վարդապէտ, էջ 83:

բեգրութեան»՝ հէնց այդ ժամանակ պայքար սկսուեց հայերի եւ ափխազների միջեւ վիրքը նուածելու համար¹⁹:

Հայ-ափխազական առաջին պատերազմը (881 թ.)

Աշոտ Ա-ի օրօք (885-890) ափխազական թագաւորութեան հետ հայոց տիրակալի փոխարաբերութիւնների մասին հայ պատմիչներից տեղեկութիւն է պահպանել Յովհաննէս Դրասխանակերտցին: Լսու պատմիչի՝ Աշոտ Ա թագաւորը «ձեռն զիիւսխական կողմանք արկեալ ի ծործորս մեծի լերինն Կովկասու, որ ի հովիտն եւ ի ճորս երկայնագողս բնակեալք էին ազգք ընդ իւրեաւ հնազանդեցուցաներ...: Այլ եւ զբագաւորն Եզերացոց ի սէր միարանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով՝ մտերմարար պարտավճար միշտ նմա ի ծառայութիւն բերէր»²⁰: Այս անչափ կարեւոր տեղեկութիւնը նախկինում յանիրաւի անտեսուել է: Մինչդեռ պատմիչն ուղղակիորէն վկայում է, որ ափխազական թագաւորը հարկ էր վճարում Աշոտ Ա-ին: Հոգեւորական-պատմիչը նոյնիսկ որոշ չափով մեղմացնում է գոյնները, որի հետեւանքով թւում է, թէ ափխազաց թագաւորը խաղաղութեամբ է հպատակուել հայոց թագաւորին՝ որդիաբար հարկ վրճարելով նրան: Սակայն «Վրաց տարեգրութիւն»-ը պահպանել է կարեւոր տեղեկութիւններ այդ իրադարձութեան մասին, որոնք ցոյց են տալիս, որ ափխազաց թագաւորն այնքան էլ «ի սէր միարանութեան» չէր կապուած Աշոտ Ա-ին, այլ հնազանդեցուել էր զէնքի ուժով դեռեւս Աշոտի՝ Արմինիա ոստիկանութեան իշխանաց իշխան եղած տարիններին: Այդ ժամանակ Այսրկովկասում ռազմական գործողութիւններ են տեղի ունեցել հայկական եւ ափխազական զօրքերի միջեւ: Այդ են ցոյց տալիս նաև որոշ այլ սկզբնաղբւրների տեղեկութիւնները եւս:

«Վրաց Տարեգրութիւն»-ը տեղեկացնում է, որ ափխազաց Գրորդի Ա թագաւորը (861-868) նուածում է Քարթլին՝ Դրանից քիչ անց ափխազաց թագաւորութիւնում սկսուեցին գահակալական կուիւններ, եւ, ի վերջոյ, թագաւոր դարձաւ իովանն, որ իր որդի Աստրներսէի համար կին բերեց Կղարջքի Աշոտ

¹⁹ Տե՛ս «Մատիան Կարլիս», էջ 31:

²⁰ Տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 142:

²¹ Տե՛ս «Մատիան Կարլիս», էջ 31:

կիւրոպաղատի (մահ. 826թ.) որդի Գուառամի զստերը: Այս ժամանակ է, ահա՝, որ Արմինիա ոստիկանութեան իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին սկսեց կենտրոնական եւ արեւմտեան Ալարբ-կովկասում իր գերիշխանութեան հաստատման գործընթացը: Նախքան ուազմական գործողութիւններ սկսելը կողմերը ձեւաւորում են սեփական ուազմաքաղաքական դաշինքները: Գուառամի որդի Նասրան, որի քոյլը ափխազաց թագաւորի կինն էր, եւ Գուրգէնը, որ Աշոտ կիւրոպաղատի որդի Ալարներսէի որդին էր, դաշնակցում էին ափխազաց թագաւորի հետ, իսկ Թուեդքին տիրած Լիպարիտ Բաղվիվաշը եւ Կղարջքի կիւրոպաղատ Դաւիթը (մահ. 881թ.²²) Հայերի: Զ. Անչարաձէն նշում է, որ քանի որ Աշոտ Բագրատունին դուրս էր եկել ափխազաց թագաւորութեան դէմ, Դաւիթ կիւրոպաղատը, ինքնրատինքէան հասկանալի է, ըրունելու էր ափխազների հակառակորդի կողմը, բացի այդ էլ Նասրան անցել էր ափխազների կողմը: Հէնց այդ պատճառով Դաւիթն ու Լիպարիդը օգնեցին Հայերին²³: Հստ «Վրաց տարեգրութեան» հէնց այդ ժամանակ ուազմական գործողութիւններ սկըսուեցին Հայերի եւ ափխազների միջեւ²⁴: Ի. Զաւախիշվիլիին ճիշտ կերպով համոզուած է, որ այս շրջանում նախաձեռնութիւնն այսրդկովկասեան գործերում պատկանում էր Հայ Բագրատունիներին, ուստի եւ նա կարծում է, որ Նասրայի եւ Ալարներսէի պայքարն իրականում պայքար էր Հայերի եւ ափխազների միջեւ²⁵: 881թ. Նասրայի ձեռքով սպանեց նրա հօրեղբայր Կղարջքի կիւրոպաղատ Դաւիթը: Դրանից յետոյ Աշոտ Բագրատունին Թըռուեցի իշխան Լիպարիտ Բաղվիվաշի, Կղարջքի նոր կիւրոպաղատ Ալարներսէի, Դաւիթի եղբայր Աշոտի եւ արարների հետ արշաւանքի ելաւ եւ ջախջախեց Նասրային ու ափխազներին եւ նուաճեց Նասրայի մնացեալ հողերը: Նասրան վախուստի զիմեց Բիւզանդիա²⁶: Զ. Անչարաձէն կարծիք է յայտնել, թէ իրը Նասրայի վախուստից եւ նրա Հայր Գուառամի մահից (882) յետոյ նրանց սիրոյթներն անցան Կղարջքի կիւրոպաղատ Ալարներսէին²⁷: Վերը համոզուեցինք, որ նրանց հողերը մեծ մասամբ անցել էին Հայաստանի Բագրատունիներին, որոնց ներկայացուցիչ

²² Տե՛ս Ն. Ա.Դ.Անձ, նշ. աշխ., էջ 94:

²³ Տե՛ս Անչառաձ Յ., Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959, էջ 124:

²⁴ Տե՛ս «Матиане Картлиса», էջ 31:

²⁵ Տե՛ս Մկրտумян Г., Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, էջ 87-88:

²⁶ Տե՛ս «Матиане Картлиса», էջ 31:

²⁷ Տե՛ս Անչառաձ Յ., նշ. աշխ., էջ 125:

Աշոտը «Վրաց տարեգրութեան» մէջ լիշտակուած է որպէս «հայոց թագաւոր»²⁸: Ինչ վերաբերում է Աշոտ Բագրատունու կողմում հանդէս եկած արարներին, ապա, ամենայն հաւանակառութեամբ, խօսքը Տփղիսի ամիրայութեան արարների մասին է, որն արդէն ընդունել էր Արմինիայի իշխանաց իշխանի գերիշխանութիւնը: Իսկ վերջինն իր հերթին ցոյց է տալիս, որ Աշոտ Բագրատունին Վիրքն ու այսպէս կոչուած Աղուանքը նուածել է մինչեւ 881 թ.: Թովմա Արծրունին հաղորդում է, որ «հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհին Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուածել զիշխանին Հայոց, գվարց եւ զԱղուանից, որ եղեւ իսկ»²⁹: Այսինքն Թովմա Արծրունին՝ ի տարբերութիւն Յովհաննէս Դրասխանակերտցու, տեղեկացնում է, որ Աշոտն իր նուածումները կատարել է նախքան թագաւոր դառնալը՝ Արմինիայի իշխանաց իշխան եղած ժամանակ:

Այսպիսով՝ Հայ-ափխազական առաջին պատերազմն աւարտուեց ափխազական թագաւորութեան եւ նրա դաշնակիցների ջախջախմամբ: Բայց դրանից դաս չքաղած ափխազաց թագաւորները շուտով մտան յաջորդ արկածախնդիր ձեռնարկի մէջ:

Հայ-ափխազական երկրորդ պատերազմը (888 թ.)

Վերոյիշեալ գէպքերից որոշ ժամանակ անց Բիւզանդիայից վերագարձաւ ափխազաց Գիորգի Ա. թագաւորի եղրօրորդի Բագրատը: Նա իր հետ օգնական բիւզանդական զօրք էր բերել: Նըրան յաջողուեց սպաննել իովաննի որդի Ատրներսեհին եւ տիրել ափխազաց թագաւորութեանը: Այնուհետեւ նա ամուսնացաւ Ատրներսեհի կնոջ հետ եւ Բիւզանդիայից կանչեց իր կնոջ եղբայր Նասրային: Վերջինս վերագարձաւ եւ ափխազական օգնական զօրքով Սամցիսէում տիրեց երեք բերդի՝ Օճրիսէին, Զգարիսցիէին եւ Լոմսիանթային, որոնք նախկինում կառուցել էր նրա հայր Գուառամը: Հայկական զօրքը, որին միացել էր Կղարջքի կիւրոպաղատ Ատրներսեհի զօրախումբը, արշաւեց Նասրայի գէմ: Այս անգամ նրան էր միացել նաև Ատրներսեհի որդի Գուրգէնը: Գիւսաւոր ճակատամարտը տեղի ունեցաւ Կուր գետի (Մակվարի) ափին եւ աւարտուեց Հայկական զօրքի յաղթանակով: Ճակատամարտում սպանուեցին Նասրան, ալանների իշխան Բակատարը եւ ափ-

²⁸ Տե՛ս «Մատիան Կարլիս», էջ 31:

²⁹ Տե՛ս ԹՈՎՄԱ. ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ԱՆՍՆՈՒՆ, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը Վ. Վարդաննեանի. Երևան, 1985, էջ 322.

իսպների թագաւորը: Նասրայի մահը վախուչտին դնում է 888 թ.³⁰: Հստ Դաւթի որդի Մմրատի՝ Նասրան սպանուեց Ասպինձ գիւղում՝ Սամցիսկում, որը գտնում է Կուր գետի ափին³¹: Փաստորէն, արդէն Աշոտ Ա-ի թագաւորութեան տարիներին ափիսպաց թագաւորութեան եւ նրա զաշնակիցների զօրքերը երկրորդ անգամ ջարդուեցին հայկական զօրքի կողմից, եւ ափիսպաց նոր թագաւորը (նախորդը սպանուեց Կուր գետի ափին տեղի ունեցած ճակատամարտում) ընդունեց Աշոտ Ա-ի գերիշխանութիւնը: Ուստի եւ սխալում է Ռ. Խոնենելիան, երբ այն կարծիքն է յայտնում, թէ իրը մօտ 890 թ. Աշոտ Ա-ն ռազմաքաղաքական դաշինք է կնքել ափիսպաների հետ³²: Յովհաննէս Դրասիանակերտցու վերոյիշեալ տեղեկութիւնը, մեր կարծիքով, վերաբերում է հչնց նշուած դէպքերին:

Նշենք նաեւ, որ ամենայն հաւանականութեամբ Աշոտ Ա-ի զօրքերն առաջնորդում էր նրա որդի, ապագայ հայոց թագաւոր Մմրատը: Այդ եզրակացութեանը կարելի է յանգել Յովհաննէս Դրասիանակերտցու այն վկայութիւնից, որ երբ մահացաւ Աշոտ Ա-ն (890 թ.), նրա որդի Մմրատը մազմանը չէր մասնակցում, քանի որ զրադուած էր Գուրգարքի զրաւմամբ³³:

Ինչպէս տեսնում ենք, տեղի են ունեցել կարեւոր իրադարձութիւններ: Ափիսպաների ստեղծած գաշինքին միացել է նաեւ ալանների թագաւորը, իսկ նախինում վերջինիս դաշնակից Գուրգէն Բագրատունին արդէն մարտնչում է Աշոտ Ա-ի կողմում: Հաւանարար, Գուրգէնի նպատակը Աշոտ Ա-ի օգնութեամբ որեւէ տիրոյթ ձեռք բերելն է եղել: Նա իր նպատակին չհասաւ, ինչի հետեւանքով դիմեց արկածախնդրութեան արդէն հայոց Մմրատ Ա թագաւորի օրօք (890-914), թերեւս, օգտուելով վերջինիս թագաւորութեան առաջին տարիներին եղած գժուարութիւններից³⁴: Հստ երեւոյթին, նա նկրառումներ ունէր Արտահանի նկատմամբ, սակայն, 891 թ. Ատրներսէն Բագրատունու դէմ ճակատամարտում նա պարտուեց եւ սպանուեց:

³⁰ Տե՛ս Վահշտի Բագրատոնի, էջ 187-188:

³¹ Տե՛ս Ծմբատ, сын Давида, էջ 146, ծան. 3:

³² Տե՛ս Խոնелия Р., Политические взаимоотношения Абхазского царства и царства армянских Багратидов в IX-X вв., автограферат кандидатской диссертации, Ереван, 1967, էջ 9:

³³ Տե՛ս Յովհաննէս Դրասիանակերտցի, էջ 146-150:

³⁴ Անդ, էջ 146-148:

**Կղարջի կիւրոպաղատութիւնը հայ-ափխազական
պատերազմներից յետոյ**

Ինչպէս տեսանք, հայ-ափխազական պատերազմների հետեւնքով քաղաքական թատերաբեմից հեռացան Կղարջքում Առորներսէն Բագրատունու հիմնական հակառակորդները՝ նրա եղբայր Գուառամը եւ վերջինիս որդի Նասրան, որոնց տիրոյթները մեծ մասամբ անցան Հարստանի Բագրատունիներին։ Կղարջից կիւրոպաղատութիւնում կենտրոնական դերակատարութիւն ստանձնեց Ասրներսէն Բագրատունին, որն էլ հետադայում թագ ստացաւ Սմբատ Ա թագաւորից եւ նրա կողմից հռչակուեց «Վրաց թագաւոր», թէեւ Վիրքին գեռ չէր տիրում³⁵։ 906 թ. նա մասնակցելու է նաեւ հայոց Սմբատ Ա թագաւորի ափխազական արշաւանքին³⁶։ Նա՝ զատելով վերը կատարուած քննութիւնից, տիրում էր Կղարջքին, Նիգալին, Մրիտին, Մրուղին, Շաւշէթին, Էղրին եւ Սամցիսէին։

Կղարջի կյուրոպաղատությունը



³⁵ Տե՛ս Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 188.

³⁶ Անդ, էջ 202-204։

Ամփոփելով քննութեան արդիւնքները՝ նշենք, որ թ. դ. 80-ական թթ. տեղի են ունեցել հայ-աֆխազական երկու պատերազմ: Երկու դէպքում էլ՝ թէ՛ 881 թ. եւ թէ՛ 888 թ., հայկական բանակը պարտութեան մատնեց աֆխազների կողմից ստեղծուած դաշինքների ուժերին: Արդ պատերազմների հետեւանքով Կղարչքի կիւրոպազատութիւնում զլիսաւոր դերակատարներից երկուսը՝ Գուառամ Բագրատունին եւ նրա որդի Նասրան հեռացան քաղաքական ասպարէզից իրենց տեղը զիջելով հայոց Աշոտ Բագրատունուն:

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ